



1. Իմ Տէրս ինձ կառաջնորդէ,
Իր սուրբ ձեռքովը զիս կուղղէ:
Ուր որ ըլլամ, ինչ որ ընեմ,
Առաջնորդող ձեռքն կը տեսնեմ:

Կառաջնորդէ, կառաջնորդէ,
Իր սուրբ ձեռքովը զիս կուղղէ:
Ես աշակերտ միշտ գտնուիմ
Եւ հետեւող՝ հաւատարիմ:

2. Թէ անապատը թափառիմ,
Կամ Եդեմի շուքէն անցնիմ,
Լոյս կամ խաւար թէ զիս պատէ,
Դարձեալ Աստուած կառաջնորդէ:

3. Տէր, ձեռքդ ձեռքիս մէջ ես բռնեմ,
Այսուհետեւ չտրտնջեմ:
Գոհ եմ, վիճակս ինչ որ է,
Զի Տէրս ինձ կառաջնորդէ:

4. Երբ ես ընթացքս կատարեմ,
Շնորհքովդ երբ աշխարհիս յաղթեմ,
Մահուան ցուրտ գետն զիս չխռովէ,
Յոն ալ Տէրն կառաջնորդէ: